13 Հատոր
Edition

Սոցիալական ներդրումներ

Մշակույթ

Volunteering

Environmental protection

Կամավորական աշխատանքներ

Առողջապահություն

Education

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Culture

Healthcare

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ

Information and Communication Technologies

Մարզեր

Կրթություն

Regions

social investments
սոցիալական ներդրումներ
2019

VIVA CELL MTS

VIVACELL MTS

Ողջույնի խոսք

Հարգելի՛ բարեկամ,

ՎիվաՍել-ՄՏՍ-ը շուրջ տասնչորս տարի օրինակ է ծառայում կորպորատիվ պատասխանատվության մշակույթի ձևավորման և զարգացման համար:

ՎիվաՍել-ՄՏՍ-ը լի է հավատով առ այն, որ ի զորու է ընկալելի դարձնել կորպորատիվ պատասխանատվության բազմաշերտ և զարգացող էությունը՝ հուսալով, որ կհաջողվի օրինակ ծառայել, և որ այլ կազմակերպությունները կհետևեն այդ օրինակին:

Մեր ընկերությունը, կորպորատիվ սոցիալական ներդրումներ իրականացնելով, նպատակ ունի աջակցել համայնքների բարգավաճմանն ու զարգացմանը: ՎիվաՍել-ՄՏՍ-ը ներդրումներ է կատարել կրթության, առողջապահության, մշակույթի, բնապահպանության, բնակարանաշինության և հասարակական կյանքի բազմաթիվ այլ ոլորտներում:

Այս գրքում ներկայացված են 2019թ.-ի ընկերության գրանցած ձեռքբերումներն ու ծրագրերը, որոնցից շատերը շարունակական բնույթ են կրում և տարեցտարի ընդլայնում են իրենց ընդգրկումը:

Այս տարի առանձնակի ուշադրության կենտրոնում է եղել բնակարանաշինության ծրագիրը: ՎիվաՍել-ՄՏՍ-ի՝ սոցիալական ոլորտում ներդրումային նախագծերի հիմքում այն անդրդվելի համոզմունքն է, որ մեզանից յուրաքանչյուրն ի զորու է նպաստել մեզ հետ կողք կողքի ապրող մարդկանց, ժողովրդի, հասարակության և երկրի բարօրությանը: Հայրենիքը հզորացնելն ու ծաղկեցնելը յուրաքանչյուրիս առաքելությունն է: Կասկածից վեր է, որ տարբեր ոլորտներում ներդրվող մեր ջանքերը պետք է ուղղորդենք՝ հզորացնելու հայրենիքը: ՎիվաՍել-ՄՏՍ-ը մեծ պատասխանատվությամբ ու նվիրումով շարունակելու է իր առաքելությունը՝ ձգտելով ունենալ մեծ ներդրում մեր երկրի զարգացման և բարօրության գործում:

ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆ
ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն

Welcome address

Dear friend,

VivaCell-MTS has been a role model for the establishment and development of corporate responsibility culture for about 14 years.

To the strong belief of VivaCell-MTS it is possible to make the multi-layered and evolving nature of corporate responsibility comprehensive to others, hoping to serve as an example for other organizations to follow.

Our Company aims to promote the prosperity and development of communities through its corporate social investments. VivaCell-MTS has made investments in education, healthcare, culture, and environmental protection, house-building and in numerous other sectors of public life.

This book presents the Company's achievements and programs in 2019, and many of these programs are long-term initiatives expanding year after year.

This year, the focus has been on the housing program. VivaCell-MTS investments in social projects stem from an indestructible belief that each and every one of us can contribute to the well-being of our neighbors, people, and the nation. It is the mission of each of us to strengthen and have our motherland prosper. It is doubtless that the efforts we make in different sectors should be contributed to strengthening our homeland. VivaCell-MTS will continue its mission with great responsibility and devotion, striving to make a great contribution to the development and well-being of our country.

RALPH YIRIKIAN
VivaCell-MTS General Manager

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
Information and Communication Technologies

- Աջակցություն «SS ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը
  Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative
- Աջակցություն միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
  Support to the Annual Microelectronics International Olympiad
- Աջակցություն «Digital UAV Forum 2019» միջազգային միջոցառմանը
  Support to the “Digital UAV Forum 2019” international event
- Աջակցություն «Silicon Mountains» համաժողովին
  Support to the “Silicon Mountains” forum
- Խելացի լուծումների կենտրոնի հիմնում՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում
  Founding Center for smart solutions at the National Polytechnic University of Armenia

Կրթություն
Education

- Բաց դռների օրերի և դասախոսությունների կազմակերպում
  Organization of open doors and lectures
- Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում
  Provision of tuition fee to students of universities of Armenia
- «VivaStart» կրթական ծրագրի իրականացում
  Organization of “VivaStart” educational program
- Աջակցություն՝ ուսանողների գիտելիքների ամրապնդման և կիրառական հմտությունների խորացմանը
  Support to student opportunities in strengthening practical skills
- Աջակցություն՝ «Բիզնես առաջադրանք» ամենամյա մրցույթին
  Support to “Business Challenge” annual contest

Առողջապահություն
Healthcare

- Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
  Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families
- Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
  Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center
- Աջակցություն Հայաստանի 5-րդ միջազգային բժշկական համագումարին
  Support to the 5th International Medical Congress of Armenia

Մշակույթ
Culture

- Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին
  Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO
- Աջակցություն «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին
  Support to the “Golden Apricot” International Film Festival
- Աջակցություն «The Armenian Genocide: Prelude and Aftermath: as reported in the U.S. Press» ժողովածուի հրատարակմանը
  Support to the publication of a collection “The Armenian Genocide: Prelude and Aftermath: as reported in the U.S. Press”

Սպորտ
Sport

- Աջակցություն Հայաստանի շախմատի ֆեդերացիային
  Support to the Chess Federation of Armenia

Շրջակա միջավայրի պաշտպանություն
Environmental Protection

- Աջակցություն վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Արևորդի» էկո-ակումբներին
  Support to “SunChild” eco clubs of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

Կամավորական աշխատանքներ
Volunteering

- ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ
  Participation of VivaCell-MTS employees in the house-building project in rural communities in partnership with “Fuller Center for Housing” Armenia
- ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը Ծիծեռնակաբերդի այգում իրականացվող ծաղկահավաքին
  Participation of VivaCell-MTS employees in the flower gathering in Tsitsernakaberd Park
- ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը Վայոց Ձորի մարզի Վարդահովիտ բնակավայրում անտառապատ տարածքների վերականգնմանը
  Participation of VivaCell-MTS employees in tree-planting in Vardahovit, Vayots Dzor region, to restore degraded forest areas
- ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների աջակցությունը «Բարի մամա» ՀԿ-ին
  Support of VivaCell-MTS employees to “Bari Mama” NGO
- ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների աջակցությունը՝ «Վորլդ Վիժն» կազմակերպության «Գաղտնի Ձմեռ պապ» արշավին
  Support of VivaCell-MTS employees to “Secret Santa” campaign by “World Vision”

Մարզեր
Regions

- Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ
  Support to the house-building project for rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia
- Աջակցություն գյուղական համայնքներում ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրին՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում
  Support to the water supply improvement project in rural communities in the frame of the “Alternative Energy” project
- Արևային էներգիայի հիման վրա գործող ջեռուցման համակարգերի և արևային ջրատաքացուցիչների ներդրում գյուղական համայնքներում՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում
  Installation of solar heating systems and solar water heaters in rural communities in the frame of the “Alternative Energy” project
- Արտաքին լուսավորության լուսադիոդային (LED) համակարգերի տեղադրում գյուղական համայնքներում՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում
  Installation of LED street lighting systems in rural communities in the frame of the “Alternative Energy” project

Այլ
Other

- Աջակցություն «Օրրան» բարեգործական ՀԿ-ին
  Support to “Orran” benevolent NGO

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ

Information and Communication Technologies

Աջակցություն «SS ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը

Շուրջ մեկ տասնամյակ SS ոլորտում համաշխարհային ներդրման համար 22 մրցանակ է շնորհվում հեղինակավոր անհատների, ովքեր իրենց ներդրած ջանքերի ու աշխատանքի շնորհիվ բերում են շրջադարձային փոփոխություններ և զարգացումներ: Ներդրումները կարող են ունենալ տարբեր դրսևորումներ՝ կրթական, տեխնոլոգիական, ֆինանսական և ձեռնարկատիրական: Այս տարի ևս ՎիվաՍել-ՄՏՍ-ը ստանձնել է մրցանակաբաշխության գլխավոր գործընկերությունը: SS ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի 2019թ.-ի դափնեկիր է դարձել «Origami World» տեսության հիմնադիր, «վիրտուալ իրականություն» հասկացության հեղինակ Կարնեգի Մելոն համալսարանի պրոֆեսոր Տակեո Կանադեն:

Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative

For nearly a decade the award for global contribution to humanity through IT has been granted to prominent individuals whose works bring revolutionary developments in the sphere of IT, in the forms of education, technologies, finances and business. This year again, VivaCell-MTS became the general partner of the initiative. The 2019 Laureate of the Global IT Award is the author of the concept of ‘virtualized reality’, the founder of “Origami World” theory, professor of the Carnegie Mellon University Takeo Kanade.

Աջակցություն Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային

Միկրոէլեկտրոնիկայի 14-րդ ամենամյա միջազգային օլիմպիադայի եզրափակիչ փուլը կայացել է Երևանում՝ «Սինոփսիս Արմենիայի» ուսումնական դեպարտամենտում: Այս տարի մրցույթն ունեցել է 34 մասնակից՝ 18 երկրից: Այս տարի ևս օլիմպիադայի մրցույթային ծրագրում ընդգրկվել են հետևյալ թեմաները. թվային ինտեգրալ սխեմաների նախագծում և թեստավորում, անալոգային և խառը ազդանշանային ինտեգրալ սխեմաների նախագծում և թեստավորում, կիսահաղորդչային սարքեր և տեխնոլոգիա, ինտեգրալ սխեմաների ավտոմատացված նախագծման մաթեմատիկական և ալգորիթմական ապահովում: Օլիմպիադայի գլխավոր գործընկերն է ՎիվաՍել-ՄՏՍ-ը:

Support to the Annual Microelectronics International Olympiad

The final stage of the 14th International Microelectronics Olympiad took place in Yerevan at the “Synopsys Armenia” Educational Department (SAED). This year the Olympiad attracted 34 contestants representing 18 countries. This year, too, Olympiad topics included Digital IC Design and Test, Analog and Mixed-Signal IC Design and Test, Semiconductor Devices and Technology, and Mathematic and Algorithmic Issues of Electronic Design Automation (EDA). VivaCell-MTS is the general partner of the Olympiad.

Աջակցություն «Digital UAV Forum 2019» միջազգային միջոցառմանը

Այս տարի առաջին անգամ մեկնարկել է արհեստական բանականությանը և անօդաչու թռչող սարքերին նվիրված՝ «Digital UAV Forum 2019» միջազգային միջոցառումը: Ֆորումի գլխավոր գործընկերն է ՎիվաՍել-ՄՏՍ-ը: Ֆորումի շրջանակում տեղի ունեցած հեքքթոնի արդյունքում ժյուրիի կողմից լավագույնը ճանաչված երեք թիմերը ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից պարգևատրվել են դրամական մրցանակներով: Ֆորումն իրականացվում է գիտակրթական և գիտահետազոտական կազմակերպությունների կադրային ներուժի զարգացման և ամրապնդման, ինչպես նաև օժտված երիտասարդներին գիտության, տեխնոլոգիաների և կրթության ոլորտներում ներգրավելու և համախմբելու համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով:

Support to the “Digital UAV Forum 2019” international event

Digital UAV International Forum 2019, the first in its kind event on artificial intelligence and unmanned aerial vehicles in Armenia, kick-started. VivaCell-MTS is the general partner of the forum. As part of the Hackathon taken place during the Digital UAV Forum 2019, VivaCell-MTS granted prizes to the best three teams selected by the panel. The event aims at creating favorable conditions for development and strengthening of human potential at research and academic institutions, as well as engagement and uniting of young talents in the sphere of science, technologies and education.

Աջակցություն «Silicon Mountains» համաժողովին

Երևանում 2019թ.-ին կայացել է S2S ոլորտում խելացի լուծումներին և համաշխարհային շուկայում առաջիկա տարիներին սպասվող զարգացումներին նվիրված «Silicon Mountains» երկօրյա համաժողովը: Միջոցառման գլխավոր գործընկերը դարձավ ՎիվաՍել-ՄՏՍ-ը: Կայացել են քննարկումներ՝ կիբերանվտանգության, արհեստական բանականության, իրերի համացանցի, ժամանակակից S2S կրթության մարտահրավերների թեմաներով: Միջոցառմանը մասնակցել են բանախոսներ համաշխարհային առաջատար այնպիսի կազմակերպություններից, ինչպիսիք են՝ «Microsoft»-ը, «Cisco»-ն և «nCipher Security»-ն և «NXP Semiconductors»-ը:

Support to the “Silicon Mountains” forum

“Silicon Mountains”, a two-day conference dedicated to smart solutions in the ICT sector and world market developments expected in the near future, was organized in 2019 in Yerevan. The general partner of the event was VivaCell-MTS. Discussions were dedicated to the topics of artificial intelligence, cyber security, IOT, and modern tech education challenges. Speakers from world famous companies, such as “Microsoft”, “Cisco”, “nCipher Security” and “NXP Semiconductors” participated in the forum.

Խելացի լուծումների կենտրոնի հիմնում՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում

S2S գործատուների միությունը ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության աջակցությամբ 2019թ. ձեռնարկել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում խելացի լուծումների կենտրոնի հիմնման նախագիծ: Առաջին փուլում կենտրոնում գործելու է երեք լաբորատորիա: Կենտրոնը գործելու է կիբերանվտանգության, միկրոէլեկտրոնիկայի և իրերի համացանցի ուղղություններով: Կենտրոնում իրականացվելու են ինչպես մագիստրոսական կրթական ծրագիր, այնպես էլ՝ վերապատրաստման դասընթացներ:

Founding Center for smart solutions at the National Polytechnic University of Armenia

The Union of Employers of ICT, with the support of VivaCell-MTS, undertook the establishment of the Center for smart solutions at the National Polytechnic University of Armenia. In the first phase, three laboratories will operate in the center. The directions of the center will include cybersecurity, microelectronics and Internet of things. The center will provide both a master's program and training courses.

Կրթություն

Education

Բաց դռների օրերի և դասախոսությունների կազմակերպում

Գործնական գիտելիքները և տեղեկացվածությունը մասնագիտական կողմնորոշման և առաջընթացի հիմնական գրավականն են: ՎիվաՍել-ՄՏՍ-ը բարձր է գնահատում նման ձևաչափով նորարարական գիտելիքների տարածումը, ինչն օգնում է երիտասարդներին կիրառել ստացած գիտելիքները, հմտություններն ու գործնական խորհուրդները հետագայում՝ իրենց սեփական նախաձեռնություններում: ՎիվաՍել-ՄՏՍ-ի Բաց դռների օրերին ուսանողներին և դպրոցականներին թույլ են տալիս անձամբ տեսնել, թե ընկերությունն ինչպես է աշխատում և ապրում որպես մի ընտանիք:

Organization of open doors and lectures

Practical knowledge and skills are the main guarantees for career orientation and progress. VivaCell-MTS values this format to share innovative knowledge to help young people implement their skills and experience in their future initiatives. VivaCell-MTS opens its doors to students and schoolchildren to allow them to see how the Company works and lives as a family.

Հայաստանյան բուհերի ուսանողների կրթաթոշակի տրամադրում

Հատուկ կարիքներ ունեցող, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից ուսանողների կրթաթոշակային աջակցության ծրագրի մեկնարկով ընկերությունը ստանձնեց մինչև ուսման ավարտը ուսանողներին օժանդակելու պատասխանատվությունը: Կրթաթոշակային այս ծրագիրը նպատակ ունի կրթությունը հասանելի դարձնելու խոցելի խմբերում գտնվող ուսանողներին:

Provision of tuition fee to students of universities of Armenia

With the launch of the tuition program to students in special need, and from socially vulnerable families, the Company undertook the responsibility to support the students until graduation. This scholarship aims at providing students from vulnerable groups of society an access to university education.

«VivaStart» կրթական ծրագրի իրականացում

«VivaStart» կրթական ծրագիրն իրականացվում է 2015 թվականից: Ծրագրի նպատակն է զարգացնել ուսանողների՝ վաճառքի և սպասարկման հմտությունները: Ուսանողներն անցնում են նախապատրաստական դասընթացներ, այնուհետև հնարավորություն են ստանում գործնականում կիրառելու ստացած գիտելիքները ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններում: Ծրագրին կարող են մասնակցել Երևանի և մարզերի այն ուսանողները, որոնք ցանկություն ունեն ծանոթանալ սպասարկման ոլորտի առանձնահատկություններին և ձգտում են ստանալ տեսական և գործնական գիտելիքներ:

Organization of “VivaStart” educational program

“VivaStart” educational program was launched in 2015. The aim of this project is to develop the sales and customer care skills of the students. After attending preparatory classes students are given a chance to exercise their knowledge while working at VivaCell-MTS service centers. The program is available for students from Yerevan and the regions of Armenia, willing to get acquainted with specifics of customer service, and seek to acquire theoretical and practical knowledge.

Աջակցություն՝ ուսանողների գիտելիքների ամրապնդման և կիրառական հմտությունների խորացմանը

ՎիվաՍել-ՄՏՍ-ի, «Սինոփսիս Արմենիայի» և Եվրոպական համալսարանի միջև ստորագրվել է փոխըմռնման հուշագիր: Հուշագիրը նախատեսում է համատեղ գործողություններ՝ ուղղված համալսարանի ուսանողների գիտելիքների ամրապնդմանն ու կիրառական հմտությունների խորացմանը: Եռակողմ փաստաթղթի համաձայն՝ «Սինոփսիս Արմենիան» «Միկրոէլեկտրոնային սխեմաների և համակարգեր» ամբիոնի ուսանողներից որակյալ մասնագետներ պատրաստելու նպատակով կտրամադրի ուսումնական նյութեր և ձեռնարկներ: Ուսանողների տեսական գիտելիքներն ու կիրառական հմտությունները զարգացնելու նպատակով կկազմակերպվի արտադրական պրակտիկա: Հուշագրի շրջանակներում նաև նախատեսվում է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում:

Support to student opportunities in strengthening practical skills

A memorandum of understanding was signed between VivaCell-MTS, “Synopsys Armenia”, and the European University. The memorandum provides for joint actions aimed at strengthening the knowledge obtained at the university, as well as developing practical skills. According to the tripartite document, “Synopsys Armenia” will provide educational materials and manuals for the training of qualified specialists from students of the department of “Microelectronic Circuits and Systems”. Internships at VivaCell-MTS will be organized for the students to help them develop theoretical knowledge into practical skills. Within the framework of the memorandum, it is also planned to retrain the teaching staff of the department.

Աջակցություն՝ «Բիզնես առաջադրանք» ամենամյա մրցույթին

«Հայաստանի պատանեկան նվաճումների» նախաձեռնությամբ և ՎիվաՍել-ՄՏՍ-ի գործընկերությամբ՝ 2019թ. Ծաղկաձորում արդեն հինգերորդ անգամ կայացել է «Բիզնես առաջադրանք» ամենամյա մրցույթը: Հերթական մրցույթին մասնակցել են «Հայաստանի պատանեկան նվաճումների» ամառային ճամբարի մասնակիցները. ավելի քան 110 աշակերտ՝ հանրապետության տարբեր մարզերից: Ծրագիրը ճամբարականներին հնարավորություն է ընձեռում տեսական գիտելիքները կիրառելու գործնական միջավայրում, բիզնես տեսանկյունից առաջարկելու նորարարական լուծումներ և մոտեցումներ:

Support to “Business Challenge” annual contest

The 5th annual “Business Challenge” event, organized by “Junior Achievement of Armenia” in partnership with VivaCell-MTS, took place in Tsaghkadzor in 2019. 110 students from the regions of Armenia embraced in the “Junior Achievement” annual camp took part in the competition. The event gives students opportunity to turn their theoretical knowledge into practical learning and to offer novel solutions and approaches.

Առողջապահություն

Healthcare



Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին

Հայաստանում գործող «ՍՈՐՍ» հիմնադրամի առաքելությունը հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցություն տրամադրելն է: Հիմնադրամը կարողացել է համախմբել հաշմանդամության տարատեսակ խնդիրներով զբաղվող առաջատար մասնագետների, աշխատանքով ապահովել նեղ մասնագիտացմամբ երիտասարդ կադրերի, աջակցել թիրախային խմբում հայտնված ընտանիքներին ու երեխաներին: 2016 թվականից հիմնադրամի տարբեր ծրագրերին միացել է ՎիվաՍել–ՄՏՍ– ը:

Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families

The “SOURCE” Foundation operating in Armenia has a mission to support children with disabilities and their families. The foundation has united specialists providing professional care to children with disabilities, as well as in creating jobs for young specialists in this sphere, supporting the families in the target group and helping the children. VivaCell–MTS started cooperation with the foundation in 2016.

Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ

ՎիվաՍել-ՄՏՍ-ի հատուկ ուշադրության կենտրոնում են աուտիզմով հիվանդ երեխաները: 2008 թվականից ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» կողմից աուտիզմով երեխաների համար իրականացվող ծրագրերին: Կենտրոնի գործունեության արդյունավետությունը չափվում է այն առաջընթացով, որ գրանցում են սաներն իրենց ստացած գիտելիքների, ինքնասպասարկման հմտությունների և հասարակությանն ինտեգրվելու հարցում:

Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center

Children suffering with autism are within VivaCell-MTS' special focus of attention. Starting from 2008 VivaCell-MTS has been supporting the programs organized by "International Child Development Center" for children with autism. The productivity of the center's operations is measured by the progress of children in terms of gained knowledge, self-support skills and the ability to integrate into the society.

Աջակցություն Հայաստանի 5-րդ միջազգային բժշկական համագումարին

ՎիվաՍել-ՄՏՍ-ը, որը Հայաստանի 5-րդ միջազգային բժշկական համագումարի գլխավոր գործընկերն է, հայտարարել է էլեկտրոնային առողջապահության համակարգում «Mobile ID» ներդնելու ծրագրի մասին: Արդեն իսկ պայմանավորվածություն է ձեռք բերվել 22 էլեկտրոնային առողջապահության համակարգը կառավարող «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ընկերության հետ՝ «Mobile ID»-ն էլեկտրոնային առողջապահության համակարգում ներդնելու ուղղությամբ: Դա այն գործիքն է, որի օգնությամբ պետք է տեղի ունենա շահառուների գրանցումն ու խիստ նույնականացումը էլեկտրոնային առողջապահության տեղեկատ-վական շտեմարանում:

Support to the 5th International Medical Congress of Armenia

VivaCell-MTS, which is the general partner of the 5th International Medical Congress of Armenia, has announced introducing “Mobile ID” in the country’s e-health system. VivaCell-MTS has already reached an agreement on installation of “Mobile ID” with the “National e-Health Operator”, the company managing Armenia’s e-health system. “Mobile ID” will be the platform that registers and provides high-accuracy identification of patients in e-health database.

Մշակույթ

Culture

Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին

«Ունիսոն» հասարակական կազմակերպությանը կից գործող «Փարոսը» հանրության շրջանում մեծ ճանաչման արժանացած երգչախումբ է: Այս երգչախումբը, որի երգիչների մեծ մասը հաշմանդամություն ունեցող, այդ թվում՝ սայլակավոր մարդիկ են, անցել է ստեղծագործական կայացման երկար ուղի: «Փարոսը» ելույթներով հանդես է եկել Հայաստանի, Արցախի և արտերկրի բեմերում: ՎիվաՍել-ՄՏՍ-ն իր աջակցությամբ սատարում է երգչախմբի անդամներին՝ շարունակելու իրենց գործունեությունը և նվաճելու նոր բեմեր:

Support to the “Paros” Chamber Choir of “Unison” NGO

“Paros”, operating under the umbrella of “Unison” NGO, is a choir enjoying wide public renown. The choir, with most of its singers being people with disabilities, including wheelchair users, boasts a long list of accomplishments, including performances in Armenia, Artsakh and many countries abroad. VivaCell-MTS supports the members of the choir in continuing their performances and conquering new stages.

Աջակցություն «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին

ՎիվաՍել-ՄՏՍ-ը կարևորում է մշակութային կյանքի զարգացմանը Հայաստանում: Կինոփառատոնը հսկայական աշխատանք է կատարում աշխարհի քարտեզի վրա Հայաստանը որպես հարուստ մշակույթ ունեցող երկիր ճանաչելի դարձնելու համար: Փառատոնի կայացման գործում մեծ ներդրում է ունեցել միջոցառման գլխավոր գործընկեր ՎիվաՍել-ՄՏՍ-ը:

Support to the “Golden Apricot” International Film Festival

The development of the cultural life is of great importance to VivaCell-MTS. The “Golden Apricot” film festival is doing a great work to make Armenia a recognizable country with its rich culture. The general partner VivaCell-MTS has made a major contribution to the formation of the film festival.

Աջակցություն «The Armenian Genocide: Prelude and Aftermath: as reported in the U.S. Press» ժողովածուի հրատարակմանը

2019թ.-ին տպագրվել է «The Armenian Genocide: Prelude and Aftermath: as reported in the U.S. Press» ժողովածուն: Հատորների հրատարակման աջակիցը ՎիվաՍել-ՄՏՍ-ն է: Ժողովածուում տեղ են գտել 1890-1922թթ. ընթացքում ամերիկյան մամուլում, մասնավորապես՝ «The New York Times» և «The Boston Daily Globe» պարբերականներում տպագրված՝ հայերի կոտորածների վերաբերյալ նյութեր: ՎիվաՍել-ՄՏՍ-ը տարիներ շարունակ կանգնած է եղել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողքին և աջակցել է տարբեր ծրագրերի իրականացմանը:

Support to the publication of a collection "The Armenian Genocide: Prelude and Aftermath: as reported in the U.S. Press"

The collection "The Armenian Genocide: Prelude and Aftermath: as Reported in the U.S. Press" has been published in 2019 with the support of VivaCell-MTS. The volumes reflect on publications covering the Armenian massacres in the American press in 1890-1922; particularly, the volume includes publications from "The New York Times" and "The Boston Daily Globe". VivaCell-MTS has supported the Armenian Genocide Museum-Institute for years.



Շրջակա միջավայրի պաշտպանություն

Environmental protection

Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Արևորդի» էկո-ակումբներին

Հայաստանում մեծ հետաքրքրություն են ներկայացնում էկո-ակումբ հանդիսացող պատանեական կենտրոնները, որոնք կազմակերպում են բազմաթիվ կրթական ծրագրեր՝ շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ: Այս ակումբներին անդամակցում են հարյուրավոր պատանիներ: Ակումբի տարբեր տարիների մասնակիցներ նկարահանել են մի քանի տասնյակ վավերագրական ֆիլմ, որոնք արդյունավետ են բնապահպանության վերաբերյալ տեղեկությունների տարածման հարցում: «Արևորդի» էկո-ակումբներ են գործում Կոտայքի Գառնի և Վայոց Ձորի Գնիշիկ համայնքներում:

Support to “SunChild” eco clubs of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets

Eco clubs for youth are gaining popularity in Armenia. These clubs offer various educational programs on environmental issues. Hundreds of enthusiastic teenagers attend classes and meetings of the clubs. Young people that have participated in the clubs throughout years have produced several dozens of documentaries as effective means for spreading information on environmental issues. The eco clubs operate in Garni community, Kotayk, and in Gnishik community, Vayots Dzor.

Աջակցություն Գնիշիկ բնակավայրի տարածքում իրականացված ծառատունկին

Վայոց Ձորի Գնիշիկ բնակավայրի տարածքում շուրջ 12 000 ծառ է տնկվել: Ծառատունկն իրականացվել է Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC)՝ «Անտառային լանդշաֆտի վերականգնում. փորձառական հարթակ՝ Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի տարածքում» ծրագրի շրջանակում: Ծրագրի իրականացմանն աջակցել է ՎիվաՍել–ՄՏՍ–ը: Տնկիների հետագա խնամքն առավել հուսալի դարձնելու նպատակով, տեղադրվել են մարդկանց և կենդանիների համար անվտանգ՝ շարժական «էլեկտրական հովիվներ»:

Support to tree planting in Gnishik settlement

About 12 000 trees have been planted in Gnishik settlement of Vayots Dzor region. The tree planting was undertaken by the Foundation for the Preservation of Wildlife and Culture Assets (FPWC), in the frames of “Forest Landscape Restoration: An Experimental Platform within the Framework of the Caucasus Wildlife Refuge” project. The project was implemented with the support of VivaCell–MTS. To safeguard the newly planted seedlings, portable “Electric fences” are placed around areas, which are safe for people and animals.

Կամավորական աշխատանքներ

Volunteering

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ

ՎիվաՍել-ՄՏՍ-ը և «Ֆուլեր տնաշինական կենտրոնը» շարունակում են համատեղ ծրագիրը: Համայնքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելուն զուգահեռ, ՎիվաՍել-ՄՏՍ-ը կարևոր է համարում նաև շինարարական աշխատանքներին կամավորների մասնակցությունը, ովքեր անտարբեր չեն իրենց հայրենակիցների դժվարությունների հանդեպ և պատրաստակամություն են հայտնում աջակցելու տարվող աշխատանքներին:

Participation of VivaCell-MTS employees in the house-building project for rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia

VivaCell-MTS and the “Fuller Center for Housing” Armenia continue the joint project. Along with providing financial support to the communities, VivaCell-MTS also considers volunteer participation in construction works compassionate to the hardships of their compatriots and are willing to assist to the activities an important part of its programs.

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը Ծիծեռնակաբերդի այգում իրականացվող ծաղկահավաքին

Հայոց ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակին խոնարհված ծաղիկները վերամշակվում են՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի համագործակցության արդյունքում: ՎիվաՍել-ՄՏՍ-ի բազմաթիվ աշխատակիցներ որպես կամավորներ մասնակցում են ծաղկահավաքին: Ծիծեռնակաբերդի համալիրում խոնարհված ծաղիկների ցողուններն անջատվում են ծաղկաթերթերից, ցողուններից պարարտախառնուրդ է ստացվում, իսկ ծաղկաթերթերն օգտագործվում են ձեռակերտ վերամշակված թուղթ պատրաստելու համար: Պարարտախառնուրդն օգտագործվում է հիշողության պուրակում հողի մշակման համար, իսկ ձեռակերտ թղթից հուշագրեր, շնորհակալագրեր, բացիկներ են պատրաստվում:

Participation of VivaCell-MTS employees in the flower gathering in Tsitsernakaberd Park

Owing to the cooperation between VivaCell-MTS and the Foundation for Preservation of Wildlife and Cultural Assets the flowers brought to the Armenian Genocide Memorial eternal flame are recycled every year. Many employees of VivaCell-MTS participate in flower gathering event as volunteers. The flowers laid at the memorial are gathered and their stems are removed from the petals. The stems are used to derive compost, and the petals are processed into handmade paper. The compost is used for the treatment of the soil in the Genocide Memorial Park, while the recycled paper is used for certificates or postcards.

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը Վայոց Ձորի մարզի Վարդահովիտ բնակավայրում անտառապատ տարածքների վերականգնմանը

ՎիվաՍել-ՄՏՍ-ի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի ջանքերով, Հայաստանի տարբեր մարզերում բնապահպանական կարևոր և լուրջ գործընթաց է ծավալվում ավելի քան 15 տարի: Գործընկերները ծառատունկ են իրականացրել Վայոց Ձորի մարզի Վարդահովիտ բնակավայրում՝ տեղի երբեմնի անտառապատ տարածքները վերականգնելու համար:

Participation of VivaCell-MTS employees in tree-planting in Vardahovit, Vayots Dzor region, to restore degraded forest areas

With the efforts of VivaCell-MTS and the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets, important and serious environmental processes have been evolving in different regions of Armenia for over 15 years. The partners organized a tree planting in Vardahovit, Vayots Dzor region, to restore the degraded forest area.

Մարզեր

Regions

Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ

ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից ֆինանսավորվող և Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» կողմից իրականացվող բնակարանաշինության ծրագիրը տարիների ընթացքում բարեկեցիկ բնակարանային պայմաններ է ապահովել հարյուրավոր ընտանիքների: Համագործակցության շնորհիվ, գործընկեր կազմակերպությունների ջանքերով լուծվել է ավելի քան 208 ընտանիքի բնակարանային խնդիր: Միայն 2019թ.-ի ընթացքում կառուցվել և ընտանիքներին հանձնվել է 46 տուն:

Support to the house-building project for rural communities in partnership with “Fuller Center for Housing” Armenia

The housing project financed by VivaCell-MTS and implemented by the “Fuller Center for Housing” Armenia has provided hundreds of families with decent housing conditions in the course of years. Owing to the efforts of the partnering organizations, the housing problem of over 208 families has been solved. In 2019 alone the program has provided 46 houses.

Աջակցություն գյուղական համայնքներում ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրին՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի և ՎիվաՍել–ՄՏՍ–ի՝ ջրամատակարարման բարելավմանն ուղղված համատեղ նախագծի շրջանակում ջրամատակարարմամբ են ապահովվել մի շարք մարզային համայնքներ: Գործընկերները համոզված են՝ ջրամատակարարումը բնակչության կենսագործունեության ամենաանհրաժեշտ պահանջմունքներից է, առանց որի անհնար է ապահովել մարդկանց բնականոն կյանքը և համայնքների զարգացումը:

Support to the water supply improvement project in rural communities in the frame of the “Alternative Energy” project

In the frame of the joint program implemented by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) and VivaCell–MTS aimed at improvement of water supply, a number of regional communities were provided with sustainable water supply. The partner organizations believe water supply is one of the most basic needs of life. It is impossible to provide normal life of people and development of communities without water.

Արևային էներգիայի հիման վրա գործող ջեռուցման համակարգերի և արևային ջրատաքացուցիչների ներդրում գյուղական համայնքներում՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում

ՎիվաՍել-ՄՏՍ-ը Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) մեծապես կարևորում են նորագույն տեխնոլոգիաների դերը բնության պահպանության ոլորտում: Այս տարի ևս մի շարք մարզերի համայնքներում ներդրվել են արևային էներգիայի հիման վրա գործող ջեռուցման համակարգեր և արևային ջրատաքացուցիչներ: Այս համակարգերի օգտագործումը 50-60%-ով նվազեցնում է տաք ջրի և ջեռուցման ծախսը և դրա շնորհիվ բարձրացնում է էներգախնայողությունը:

Installation of solar heating systems and solar water heaters in rural communities in the frame of the “Alternative Energy” project

VivaCell-MTS and the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) prioritize the role of modern technologies in the sphere of nature preservation. Solar heating systems and solar water heaters have been installed this year in a number of regional communities. These systems reduce heating costs by up to 50-60% and help use energy efficiently.

Արտաքին լուսավորության լուսադիոդային (LED) համակարգերի տեղադրում գյուղական համայնքներում՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) և ՎիվաՍել–ՄՏՍ–ի համագործակցությամբ՝ «Այլընտրանքային էներգիա» նախագծի շրջանակներում, Հայաստանի մարզերի մի շարք համայնքներում իրականացվել է էներգախնայող LED լուսարձակների տեղադրում: Լուսավորության նոր ենթակառուցվածքների գործարկումը համայնքներում շահավետ է, քանի որ 80%–ով նվազեցնում է էներգաօգտագործման ծախսը:

Installation of LED street lighting systems in rural communities in the frame of the “Alternative Energy” project

In the frame of “Alternative Energy” project implemented by the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) and VivaCell–MTS, energy–saving outdoor LED lights have been installed in various regional communities of Armenia. These lighting infrastructures reduce energy consumption costs up to 80% in the communities.

Այլ

Other

Աջակցություն «Օրրան» բարեգործական ՀԿ-ին

ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ համագործակցության շնորհիվ «Օրրան» բարեգործական ՀԿ-ն հաջողությամբ իրականացնում է կարիքավոր ընտանիքներին աջակցելու առաքելությունը՝ օգնելով փողոցում հայտնված կամ այդ վտանգի առաջ կանգնած հազարավոր երեխաների և միայնակ տարեցների, նպաստելով Հայաստանում երեխաների և տարեցների շրջանում աղքատության և մուրացկանության տարածումը կանխելուն ուղղված ջանքերին:

Support to “Orran” benevolent NGO

Owing to cooperation with VivaCell-MTS “Orran” benevolent NGO successfully carries out its mission of helping families in need and assisting hundreds of children and elderly who have themselves or were at the threshold of finding themselves on the street, helping with efforts to prevent the spread of destitution and begging among children and elderly in Armenia.

Ողջույնի խոսք
Welcome address 2

Ծրագրերի ցանկ
Projects List 4

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
Information and communication technologies 6

Աջակցություն «SS ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը
Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative 8

Աջակցություն միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
Support to the Annual Microelectronics International Olympiad 10

Աջակցություն «Digital UAV Forum 2019» միջազգային միջոցառմանը
Support to the “Digital UAV Forum 2019” international event 12

Աջակցություն «Silicon Mountains» համաժողովին
Support to the “Silicon Mountains” forum 14

Խելացի լուծումների կենտրոնի հիմնում՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում
Founding Center for smart solutions at the National Polytechnic University of Armenia 16

Կրթություն
Education 18

Բաց դռների օրերի և դասախոսությունների կազմակերպում
Organization of open doors and lectures 20

Հայաստանյան բուհերի ուսանողներին կրթաթոշակի տրամադրում
Provision of tuition fee to students of universities of Armenia 22

«VivaStart» կրթական ծրագրի իրականացում
Organization of “VivaStart” educational program 24

Աջակցություն՝ ուսանողների գիտելիքների ամրապնդման և կիրառական հմտությունների խորացմանը
Support to student opportunities in strengthening practical skills 26

Աջակցություն՝ «Բիզնես առաջադրանք» ամենամյա մրցույթին
Support to “Business Challenge” annual contest 28

Առողջապահություն
Healthcare 30

Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families 32

Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center 34

Աջակցություն Հայաստանի 5-րդ միջազգային բժշկական համագումարին
Support to the 5th International Medical Congress of Armenia 36

Մշակույթ
Culture 38

Աջակցություն «Ունիսոն» ՀԿ-ի «Փարոս» կամերային երգչախմբին
Support to “Paros” Chamber Choir of “Unison” NGO 40

Աջակցություն «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին
Support to the “Golden Apricot” International Film Festival 42

Աջակցություն «The Armenian Genocide: Prelude and Aftermath: as reported in the U.S. Press» ժողովածուի հրատարակմանը
Support to the publication of a collection “The Armenian Genocide: Prelude and Aftermath: as reported in the U.S. Press” 44

Շրջակա միջավայրի պաշտպանություն
Environmental Protection 46

Աջակցություն վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Արևորդի» էկո-ակումբներին
Support to “SunChild” eco clubs of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets 48

Աջակցություն Գնիշիկ բնակավայրի տարածքում իրականացված ծառատունկին
Support to tree planting in Gnishik settlement 50

Կամավորական աշխատանքներ
Volunteering 52

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ
Participation of VivaCell-MTS employees in the house-building project in rural communities in partnership with “Fuller Center for Housing” Armenia 54

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը Ծիծեռնակաբերդի այգում իրականացվող ծաղկահավաքին
Participation of VivaCell-MTS employees in the flower gathering in Tsitsernakaberd Park 56

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատակիցների մասնակցությունը Վայոց Ձորի մարզի Վարդահովիտ բնակավայրում անտառապատ տարածքների վերականգնմանը
Participation of VivaCell-MTS employees in tree-planting in Vardahovit, Vayots Dzor region, to restore degraded forest areas 58

Մարզեր
Regions 60

Աջակցություն գյուղական համայնքներում բնակարանաշինության ծրագրին՝ Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կենտրոնի» հետ համատեղ
Support to the house-building project for rural communities in partnership with the “Fuller Center for Housing” Armenia 62

Աջակցություն գյուղական համայնքներում ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրին՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում
Support to the water supply improvement project in rural communities in the frame of the “Alternative Energy” project 64

Արևային էներգիայի հիման վրա գործող ջեռուցման համակարգերի և արևային ջրատաքացուցիչների ներդրում գյուղական համայնքներում՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում
Installation of solar heating systems and solar water heaters in rural communities in the frame of the “Alternative Energy” project 66

Արտաքին լուսավորության լուսադիոդային (LED) համակարգերի տեղադրում գյուղական համայնքներում՝ «Այլընտրանքային էներգիա» ծրագրի շրջանակում
Installation of LED street lighting systems in rural communities in the frame of the “Alternative Energy” project 68

Այլ
Other 70

Աջակցություն «Օրրան» բարեգործական ՀԿ-ին
Support to “Orran” benevolent NGO 72